ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝ +37491700974, **Էլ. հասցե՝** foi@foi.am, **www.foi.am**

25.07.2023
351-27

Էկոնոմիկայի նախարար՝ Վահան Քերոբյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Քերոբյան,
ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների համաձայն.

1. **բջջային հեռախոսների** (կոդ 8517) դեպի Ռուսաստան արտահանման ծավալները 2022 թ. -ին կազմել են շուրջ 251 միլիոն դոլար, մինչդեռ 2021 թ.-ին՝ ընդամենը 188 հազար դոլար,
2. **մոնիտորների և պրոյեկտորների (կոդ 8528)** դեպի Ռուսաստան արտահանման ծավալները 2022 թ. -ին կազմել են շուրջ 91 միլիոն դոլար, մինչդեռ 2021 թ.-ին՝ ընդամենը 4000 դոլար,
3. **անօդաչու թռչող սարքերի** (կոդ 8806) դեպի Ռուսաստան արտահանման ծավալները 2022 թ. -ին կազմել են շուրջ 4.479.000 դոլար, մինչդեռ՝ 2021 թ.-ին արտահանում չի եղել,
4. **կիսահաղորդիչների (կոդ 8542)** դեպի Ռուսաստան արտահանման ծավալները 2022 թ. -ին կազմել են շուրջ 13 միլիոն դոլար, մինչդեռ 2021 թ.-ին՝ ընդամենը 2000 դոլար,
5. **կիսահաղորդիչների (կոդ 8542)** դեպի Ռուսաստան արտահանման ծավալները 2022 թ.-ին գերազանցել է 15 միլիոն դոլարը, մինչդեռ 2021 թ.-ին՝ կազմել է ընդամենը 44,000 դոլար։

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Խնդրում ենք հիմնավորել՝ ինչով է պայմանավորված վիրոնշյալ ապրանքատեսակների՝ դեպի Ռուսաստան արտահանման ծավալների կտրուկ և թռիչքաձև աճը։
2. Վերոնշյալ փոփոխությունները ինչպե՞ս են ազդել հարկային ցուցանիշների և պետական բյուջեի վրա։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան